

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի
ղեկավարի 2016թ. տարեկան հաշվետու ժողովի

Կայացած 2017 թվականի հունվարի 18-ին ժամը 14-ին

Մասնակցությամբ- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Փառանձեմ Կարապետյանի, Արևադաշտ համայնքապետարանի
աշխատակազմի աշխատակիցների, համայնքի ավագանու անդամների և համայնքի թվով 35
բնակիչների:

Նիստի նախագահ Հ.Օհանյանը
Քարտուղար՝ Թ. Կարապետյան

Լսեցին- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ
համայնքի ղեկավարի 2016թ. տարեկան հաշվետվությունը:

Արտահայտվեցին համայնքի բնակիչներ Գ. Կարապետյանը, Գ.Պետրոսյանը, Ս. Մովսիսյանը
Վ. Վարդանյանը:

Առավել մեծ են բողոքները կապված տնամերձ հողամասերի ոռոգման ջրի խնդրի հետ, ինչի
հետևանքով գյուղացին դժվարանում է վճարել հողի հարկ:

Բնակիչները ցանկանում են, որպեսզի համայնքի բոլոր փողոցներն ու ճանապարհները լինեն
բարեկարգ, ապահովված լինեն գիշերային լուսավորությամբ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2016թվականի 1-ին ընթացքում կատարված
աշխատանքները, խոսեց հետագա ծրագրերի մասին, պատասխանեց համայնքի բնակիչների հուզող
հարցերին.

Նա հայտնեց, որ համայնքապետարանի համար նույնպես առաջնահերթ են համարվում այն
աշխատանքների իրագործումը, փողոցների և ճանապարհների բարեկարգումը:

Կրթարևելյան համայնքի ֆինանսական վիճակը՝ եկամուտների հավաքագրման մակարդակը
բարձրացնելով:

Հնարավորինս կնպաստի գյուղատնտեսության և անասնապահության զարգացմանը: Ֆիզիկական
կուլտուրայի և սպորտի զարգացմանն ուղղված միջոցառումներ կկիրառվեն:

Ելույթ ունեցողները նշեցին, որ համայնքի ղեկավարը իր ելույթում մանրամասն ներկայացրեց
կատարված աշխատանքները և համայնքի ղեկավարի 2016 թ. տարեկան աշխատանքները
գնահատում են բավարար:

Որոշեցին- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ղեկավար
Հովսեփ Օհանյանի 2016 թվականի տարեկան հաշվետվությունը կատարած աշխատանքների
մասին գնահատել բավարար:

Նիստի նախագահ
քարտուղար



Հ. Օհանյան
Թ. Կարապետյան

Գ. Արևադաշտ
18.01 2017թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

տարեկան

Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ղեկավարի 2016թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը կատարած աշխատանքների մասին

Ներկայացված է 18.01.2017թ. համայնքի ժողովում:

/Ձեկ. համայնքի ղեկավար՝ Ն.Օհանյան/

Հարգելի Արևադաշտացիներ, հյուրեր թույլ տվեք Ձեզ ներկայացնելու համայնքապետարանի և ավագանու կողմից 2016թ-ի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը կատարած աշխատանքները:

Համայնքի խնդիրները լուծելու նպատակով, համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ, համայնքի ղեկավար ավագանի: Լսելով քննարկելով բնակիչներին հուզող բոլոր խնդիրները, միջոցներ ենք կիրառում դրանք լուծել ի օգուտ մեր բնակչությանը:

2016 թվականին անցկացրել ենք 12 ավագանու նիստ, պատասխանել ենք ստացվող բոլոր գրություններին և դիմումներին, համայնքի ղեկավարի կողմից հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել է 10 որոշում և արձակվել՝ 7 կարգադրություն: Համայնքապետարանը ավագանու անդամների հետ կազմակերպված ձևով անցկացրել է գարնանային զորահավաք: Ձինակոչիկների և նրանց ծնողների հետ անցկացրել ենք ռազմահայրենասիրական թեմայով գրույցներ, որի արդյունքում ոչ մի զինակոչիկ չի խուսափել զինվորական ծառայությունից: Համայնքի բյուջեի եկամուտների միջոցով ավարտին ենք հասցրել նոր թաղամասի գլխավոր գազատար խողովակների աշխատանքները: Կարող ենք ասել համայնքում լուծվել է գազաֆիկացման խնդիրները: Կատարվել է դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման աշխատանքներ: Խմելաջրի աշխատանքները ևս ավարտվել են, համայնքի բնակիչները ապահովված են խմելաջրով, մնացել է հաշվիչների տեղադրման աշխատանքները:

• Համայնքում որոշ աշխատանքներ դանդաղ են իրականանում, դա այն պարզ պատճառով է, որ մեր համայնքի բնակիչները, ովքեր ունեն սեփականաշնորհված և միաժամանակ վարձակալական հիմունքներով հողատարածքներ, չեն կարողանում ժամանակին կատարել վճարումներ: Այս ուղղությամբ կատարել ենք քայլեր, որ այսուհետ կատարվեն բավարար քանակությամբ գանձումներ: Կատարվել են կազմակերպչական աշխատանքներ, որի շնորհիվ համայնքապետարանի աշխատակազմը չունեն հողի հարկի պարտքեր: 2016 թվականին հողի հարկի գումարը կազմում է՝ 5544.9 դրամ ՀՀ դրամ, իսկ գույքահարկի գումարը կազմում է՝ 967.3 ՀՀ դրամ, տեղական տուրքերի գումարը կազմում է՝ 49.9 ՀՀ դրամ, վարձակալական հողերի գումարը կազմում է՝ 285.4 ՀՀ դրամ, գույքահարկի վարձակալությունը կազմում 99.4 ՀՀ դրամ:

Աշխատակազմի քարտուղարի կողմից բնակչությանը տրվել են տեղեկանքներ, քաղվածքներ, կատարվել են դիմումների և բողաքների քննարկումներ և տրվել՝ համապատասխան լուծում:

Արևադաշտ համայնքի եկամուտների կատարողականը

առ 01.01.2016թ. մինչև 30.12.2016թ.

- հողի հարկ – 5544.9 դրամ
- գույքահարկ - 967.3 դրամ
- վարձակալական հողերի վարձավճար - 285.4 դրամ
- դոտացիա - 5643.1 դրամ
- տեղական տուրքեր – 49.9 դրամ
- գույքի վարձակալություն- 99.4 դրամ
- մուտքերի տույժերից և տուգանքներից – 1.000.000 դրամ
- օրենքով իրավական այլ ակտերով- 70.0 դրամ
- օրենքով սահմանված դեպքերում-140.2 դրամ
- հողերի կատեգորիայի փոփոխություն- 1659.1դրամ

Ծախսերի կատարողական	
.գյուղապետարանի աշխատավարձ	- 9005.0դրամ
Էլ.էներգիայի գումար	-260.0դրամ
Կապի ծառայություն	-109.0դրամ
Համակարգչային ծառայություններ	- 49.4 դրամ
Գործուղումներ	- 150.0 դրամ
Տեղեկատվական ծառայություններ	- 160.5 դրամ
Ընդհանուր բնույթի ծառայություններ	- 701.6 դրամ
Մասնագիտական ծառայություններ	-60.0 դրամ
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում	-94.5 դրամ
Գրասենյակային նյութեր	-300.0 դրամ
Տրանսպորտային նյութեր	-600.0 դրամ
Հարկ.նպատակային նյութեր	- 100.0 դրամ
Սոց. Օգնություն	-1050.0 դրամ
Շենքերի և շինությունների վերանորոգում	-1120.0 դրամ
Տրանսպորտային սարքավորումներ	- 709.0 դրամ
Նախագծա նախահաշվային ծախսեր	- 150.0 դրամ

Քարտուղարություն

01. Հունվարի 2016թ.-ից մինչև 30. դեկտեմբերի 2016թ

Կայացել է ավագանու նիստ	Քաղաքացիներից ստացված և քննարկված դիմումների թիվը	Մուտք արված գրությունների թիվը	Ելք արված գրությունների թիվը	Տրված տեղեկանքների թիվը
12	37	207	105	173

Մասնակցել ենք Մարդարապատ հուշահամալիրում կազմակերպված Հանրապետության օրվան նվիրված միջոցառմանը, Արմավիր քաղաքում կազմակերպված բերքի տոնին:

Համայնքում մասնակցել է դպրոցի վերջին զանգի միջոցառմանը, շրջանավարտների տրվել է նվերներ:

Համայնքում կազմակերպվել է ամանորյա միջոցառումներ ,երեխաներին տրվել են նվերներ:

Համայնքապետարանը չունի աշխատավարձի պարտքեր:

Համայնքի ղեկավարը բարձրացրեց հետևյալ հիմնախնդիրները

1. Համայնքի փողոցների և ճանապարհների հիմնանորոգում
2. Համայնքի արտաքին լուսավորության ցանցի կառուցում
3. Համայնքապետարանի շենքի նորոգում
4. Մշակույթի տան կառուցում

Արևադաշտ համայնքի ղեկավար



Հ.Օհանյան